Արձանագրություն N3

ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-79/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

23.10.2026թ.
ժամը 11^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Վահրամ Եղիազարյան
Անդամներ՝ Ռաֆիկ Սարգսյան
Շահեն Սևումյան
Քարտուղար՝ Մերի Բարեղամյան

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Վահրամ Եղիազարյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է **«Անխոցելի» ՍՊԸ** մասնակցին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Վահրամ Եղիազարյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից է ճանաչվում **«Անխոցելի» ՍՊԸ** -ն:

2.2 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վահրամ Եղիազարյան**

անդամներ՝ **Ռաֆիկ Սարգսյան**

Շահեն Սևումյան

քարտուղար՝ **Մերի Բարեղամյան**